ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 2633-Հ

ՆԱՏԱԼԻ ԳԱՌՆԻԿԻ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության Նոր Նորքի բաժնի պետ Նատալի Կոստանդյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի 2026 թվականի մարտի 25-ին նշանակված ծառայողական քննության վարույթով, որը իրականացվել է քաղաքացիական ծառայության հարթակով ձևավորված էթիկայի հանձնաժողովի կողմից, 2026 թվականի ապրիլի 2-ի եզրակացությամբ որոշում է կայացվել ծառայողի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության վերաբերյալ:

Քննությամբ հաստատվել է, որ Նատալի Կոստանդյանը թույլ է տվել վարքագծի կանոնների խախտում, այսինք դրսևորել է այնպիսի վարքագիծ, որը կարող է ողջամտորեն ընկալվել որպես անհարգալից վերաբերմունք քաղաքացու նկատմամբ, այսինքն խախտել է ՀՀ փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի N 697-Ն որոշումով հաստատված կանոնագրքի 21-րդ և 23-րդ կանոնները:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 14-ին թիվ 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 27-րդ կետի 10-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու համար՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության Նոր Նորքի բաժնի պետ Նատալի Գառնիկի Կոստանդյանին հայտարարել «Նախազգուշացում»:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ Նելլի Դավթյանին.

- հրամանի մասին սահմանված կարգով և «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 7–րդ մասում նշված ժամկետում տեղեկացնել Նատալի Կոստանդյանին:

4/8/2026

X

ԽԱՉԱՏՈՒՐ ԻԳԻԹՅԱՆ

Signed by: IGITYAN KHACHATUR 2014930309

Պարտականությունները կատարող **Խ. Իգիթյան**